ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից քաղաքացիական իրավահարաբերություններում որպես ինքնուրույն սուբյեկտներ կարող են հանդես գալ ոչ միայն ֆիզիկական անձը, այլև, այսպես կոչված, իրավաբանական անձինք (առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները և այլք):

Սակայն որպես քաղաքացիական շրջանառության լիարժեք սուբյեկտ «իրավաբանական անձ» հասկացությունը ավելի ուշ դարաշրջանի ապրանքա-դրամական հարաբերությունների արդյունք է: Նույնիսկ այնպիսի զարգացած իրավական համակարգի համար, ինչպիսին էր հռոմեական իրավունքը, արդիական իմաստով «իրավաբանական անձ» հասկացությունը հայտնի չէր: Սակայն, հենց հռոմեական իրավունքում է սաղմնավորվել արդի իրավաբանական անձի ընդհանրական բնութագիրը, որը հետագայում հիմք հանդիսացավ «իրավաբանական անձի» վերաբերյալ մի շարք տեսությունների և, վերջապես, արդի գիտական հայեցակարգի մշակման համար: Հետևաբար, անհրաժեշտ ենք համարում, հակիրճ կերպով կանգ առնել հռոմեական իրավական այն ինստիտուտների վրա, որոնք այս կամ այն չափով ընդհանրական աղերս ունեն «իրավաբանական անձ» հասկացության հետ:[1]

---

[1] Մանրամասն տես, Ельяшевич В.Б. Юридическое лицо, его происхождение и функции в римском частном праве, 1910; Хвостов В.М. Система римского права. Учебник. Изд-во "Снарк", М., 1996, с. 110-122; Римское частное право. Учебник. /Под ред. проф. И.Б. Новицкого и проф. И.С. Перетерского. М., 1994, с. 115-120; Дождев Д.В. Римское частное право. Учебник. /Под ред. В.С. Нерсесянца. М., 1996, с. 268-272; Чезаре Санфилиппо, Курс римского частного права. Учебник. Перевод с итальянского /Под ред. Д.В.Дождева, М., Изд-во "БЕК", 2000, с. 47-50.

Հռոմեական իրավունքում սուբյեկտ կարող էր լինել ոչ միայն ֆիզիկական անձը, այլ նաև մարդկանց որոշակի միությունները, որոնք հանդես էին գալիս որպես մեկ միասնական ամբողջություն: Հին Հռոմում այդպիսի սոցիալական միավորներ էին համարվում արհեստավորական և կրոնական միությունները (collegia, sodalicia, societates, corpora), տեղական ինքնակառավարվող քաղաքացիական համայնքները (municipia,coloniae), պետական գանձատունը (fiscus):[2]

Հռոմեական իրավունքում որպես իրավաբանական անձինք, որոնք կազմված են կոլեգիալ հիմունքներով՝ առաջին խումբն են կազմում քաղաքական կազմակերպությունները (պետությունը՝ popubus Romanus, տեղական ինքնակառավարվող համայնքները՝ municipia և կոլոնիաները՝ coloniae):[3] Ենթադրվում էր, որ հռոմեական պետությունն ի սկզբանե իրավունքի սուբյեկտ է և օժտված է լիակատար իրավունակությամբ: Հռոմեական պետության հարաբերությունները իրավունքի մյուս սուբյեկտների հետ կարգավորվում է բացառապես հանրային իրավունքի (jus publicum) նորմերով, իսկ տեղական ինքնակառավարվող համայնքները և կոլոնիաները օժտված էին մասնավոր իրավունքի իրավունակությամբ:

Իրավաբանական անձանց երկրորդ խումբն էին կազմում արհեստավորական միությունները (եղբայրությունները՝ sodalitates) և կրոնական կազմակերպությունները (կոլեգիաները՝ collegia, օրինակ՝ պոնտիֆեքսների կոլեգիան և այլն):

Արհեստավորական միությունները և կրոնական կազմակերպությունները համարվում էին իրավաբանական անձիք՝ մասնավոր իրավունքի բնագավառում և նրանց իրավունակության սահմանները որոշված էին իրենց հետապնդած գործունեության և նպատակի ծավալով: Այդպիսի կազմակերպությունները բաղկացած պետք է լինեին առնվազն երեք անդամից ("tres facicini collegium" «կոլեգիաների կազմավորման համար բավարար էր երեք անձ»):[4] Իրավաբանական անձի գույքը առանձնացված էր նրա

---

[2] Տես, Дождев Д.В. Римское частное право. Учебник для вузов, с. 268.
[3] Տես, Чезаре Санфилиппо, Курс римского частного права. с. 48.
[4] Տես, Чезаре Санфилиппо, Курс римского частного права. с. 49.

անդամների անձնական ունեցվածքից և որպես մեկ անբաժանելի ամբողջություն կազմում էր տվյալ կազմակերպության սեփականությունը:[5]

Կազմակերպությունները օրինական էին համարվում (collegium licitum), եթե դրանց գոյությունը թույլատրված էր Սենատի կողմից:

Հռոմեական կայսրությունում քրիստոնեությունը որպես պետական կրոն ճանաչելու կապակցությամբ հնարավորություն ստեղծվեց, որպեսզի եկեղեցական հաստատությունները, ինչպես նաև մասնավոր բարեգործական կազմակերպությունները, ճանաչվեն որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտները, այսինքն՝ իրավաբանական անձինք:

Սակայն, վերոնշվածով հանդերձ, հռոմեական իրավունքը արդիական իմաստով իրավաբանական անձի վերաբերյալ ծավալուն տեսական հայեցակարգ չմշակեց, այն ձևավորվեց ավելի ուշ դարաշրջանում:

Միջին դարերում իրավաբանական անձանց վերաբերյալ պատկերացումները նույնպես ներծծված էին հռոմեական իրավահայեցողության ազդեցությամբ: Հետագայում, նոր ժամանակաշրջանում՝ ապրանքադրամային հարաբերությունների զարգացման պայմաններում, իրավաբանական անձ հասկացությունը զարգացում ստացավ, այն ձեռք բերեց ինչպես գործնական, այնպես էլ տեսական կարևոր նշանակություն: Այսպես, Ֆուրգերների առևտրական տունը Գերմանիայում, Ճենովայի սրբ. Գևորգիի բանկը, անգլիական և հոլանդական Օստ-հնդկական և Վեստ-Հնդկական կոմպանիաների գործունեությունը խթան հանդիսացան, որպեսզի «այդ առևտրային ձեռնարկություններում մշակվեին խոշոր գործերի կոլեկտիվ վարման տեխնիկան»:[6] Դրանց կուտակված փորձը՝ քաղաքացիական շրջանառությունում իրավաբանական անձանց

---

[5] Տես, Римское частное право. Учебник. /Под ред. проф. И.Б.Новицкого и проф. И.С.Петерского. - М., "Юрист", 1996, с. 118.

[6] Մանրամասն տես, Гражданское право. Учебник. Издание третье, переработанное и дополненное /Под ред. проф. А.П.Сергеева и проф. Ю.К.Толстого, Часть 1, М., 1998, с. 115-116; ЭіЁ, Каминка А.И. Основы предпринимательского права. Петроград, 1917. с. 26; Ельяшевич В.Б. Юридическое лицо, его происхождение и функции в римском частном праве. 1910; Полковников Г.В. Английское право о компаниях: закон и практика. М., 2000, с. 9-18.

մասնակցությամբ, կարևոր դեր խաղաց 19-րդ դարի քաղաքացիական և առևտրային օրենսգրքերի մշակման համար:[7]

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած տնտեսական աննախընթաց զարգացումը հզոր լիցք հաղորդեց իրավաբանական անձի ուսմունքի հետագա զարգացման համար: Երևան եկան իրավաբանական անձի հիմնահարցերին վերաբերող ինքնատիպ աշխատություններ, որոնց հեղինակները հիմնականում գերմանացի և ֆրանսիացի գիտնական-իրավաբաններ էին (Սավինի, Յիերինգ, Գիրկե, Դերնբուրգ, Սալեյլ և այլք),[8] որոնց հետևեցին նույն ժամանակաշրջանի ռուս հայտնի գիտնականները:[9]

Հիմնական գիտական հիմնահարցը, որն առավել բանավեճերի և քննարկումների առիթ է տվել, դա այն հարցն է, թե ով կամ ինչն է համարվում իրավաբանական անձի էությունը, նրա հիմնական հատկանիշները: Պայմանավորված նշված պատասխանի բովանդակությունից, իրավաբանական անձի վերաբերյալ եղած տեսակետները կամ տեսությունները կարելի է բաժանել երկու մեծ խմբերի՝ հայեցակարգեր, որոնք ժխտում են իրավաբանական անձի, որպես իրական սուբյեկտի գոյությունը և, հայեցակարգեր, որոնք ընդունում են այդպիսի սուբյեկտների իրական լինելը:[10]

Իրավաբանական անձանց մասին տեսությունների առաջին խմբին է պատկանում այսպես կոչված «պատրանքի տեսությունը», որի առաջատար ներկայացուցիչներն են Ֆ.Կ.Սավինին և Բ.Վինդայեդը:[11] Այս հայեցակարգի

---

[7] Այդ օրենսգրքերի մասին մանրամասն տես, Կ.Ցվայգերտ, Հ.Կեմց, Введение в сравнительное правоведение в сфере частного права. Том 1. Основы. М., "Международные отношения", 2000, с. 132-271.

[8] Տես, Savigny F.K. System des heutigen römischen Rechts. Bd.II. Berlin, Дернбург. Пандекты, Вещное право. СПб, 1902.

[9] Տես, Мейер Д.И. Русское гражданское право. СПб. 1902; Гуляев А.М. Русское гражданское право. СПб. 1913; Шершеневич Г.Ф. Учебник русского гражданского права. СПб. 1907; Хвостов В.М. Система римского права. Учебник. Изд-во "Снарк" /по изданию 1907-1908 гг. N, М., 1996; Суворов Н.С. Об юридических лицах по римскому праву. СПб., 1900.

[10] Տես, Гражданское право. Учебник. Издание третье, переработанное и дополненное. Под ред. проф. А.П.Сергеева и проф. Ю.К.Толстого. Часть 1. "Проспект", М., 1998. с. 121.

[11] Տես, Savigny F.K. System des heutigen römischen Rechts. Bd.II. Berlin, 1840: Windscheid B.Lehrbuch des Pandektenrechts. Bd. I. 9 Aufl. Berlin, 1907.

համածայն, իրավունքի սուբյեկտի հատկանիշներով (գիտակցություն, կամք) իրականում օժտված են միայն ֆիզիկական անձինք, սակայն օրենսդիրը կիրառական նպատակներ հետապնդելով, ճանաչում է իրավաբանական անձանց իրավասուբյեկտությունը և նրան վերագրել կամ օժտել է մարդկային անձի հատկանիշներով (գիտակցությամբ կամ արտահայտությամբ և այլն): Այսինքն, տվյալ դեպքում իրավաբանական անձի իրավասուբյեկտությունը իրավակարգի արդյունք է, իրավունքի յուրահատուկ, պատրանքային, վերացական սուբյեկտ է:

«Պատրանքային տեսության» կողմնակից էր նաև ռուս հայտնի իրավաբան Գ.Ֆ.Շերշենևիչը, ըստ որի իրավաբանական անձը լինելով «արհեստական սուբյեկտ», սակայն այն ոչ թե սուբյեկտիվ մտածողության արդյունք է, այլ գիտականորեն հիմնավորված հասկացություն է՝ որոշակի նպատակներին հասնելու համար:[12] Յամանման տեսակետներ են արտահայտել նաև Դ.Ի.Մեյերը և Ա.Մ.Գուլյաևը:[13]

«Պատրանքի տեսությունը» (legal fiction) լայն տարածում ստացավ անգլո-ամերիկյան իրավական համակարգում: Այստեղ իրավաբանական անձը (կորպորացիա) նույնպես դիտվում էր որպես արհեստական կազմավորում, որն անտեսանելի է և գոյություն ունի միայն օրենքի տեսանկյունից:[14]

«Պատրանքի տեսությանը» հարակից է նաև, այսպես կոչված, «նպատակային գույքը»[15] կամ «անձնավորված նպատակը»,[16] որն առաջ է քաշել գերմանացի գիտնական Ա.Բրինցը:[17] Վերջինս պնդում էր, որ իրավունքով և պարտականություններով կարող է օժտված լինել ինչպես կոնկրետ

---

[12] Տես, Шершеневич Г.Ф. Учебник русского гражданского права /по изданию 1907 N, М., 1996, с. 89-91.

[13] Տես, Мейер Д.И. Русское гражданское право. СПб., 1902. с. 84-87; Гуляев А.М. Русское гражданское право. СПб., 1913. с. 74-75.

[14] Տես, Джэнкс Э. Английское право. М., 1947, с. 127; Полковников Г.В. Английское право о компаниях: закон и практика., М., 2000, с. 19-38.

[15] Տես, Гражданское право. Учебник. Том 1. 2-е издание. Отв. ред. проф. Е.А.Сухонов. М., Изд-во "БЕК", 1998, с. 173.

[16] Гражданское право. Учебник. Под ред. проф. А.П.Сергеева и проф. Ю.К.Толстого, Часть 1, М., 1998, с. 122.

[17] Տես, Brinz A. Lehrbuch der Pandeken. Bd. I, 1857.

ֆիզիկական անձը (սուբյեկտը), այնպես էլ դրանք ծառայել որոշակի նպատակների համար (օբյեկտին): Երկրորդ դեպքում իրավունքի սուբյեկտ ընդհանրապես անհրաժեշտ չէ, քանի որ նրա դերը կատարում է այդ նպատակների համար առանձնացված գույքը: Ըստ ավանդության այն օժտված է իրավունքի սուբյեկտի հատկանիշներով, չնայած իրականում դրա անհրաժեշտությունը չկա և, հետևաբար, ավելորդ է նաև «իրավաբանական անձ» հասկացությունը:

Ըստ Ռուդոլֆ Յհերինգի տեսակետի, իրավաբանական անձը, որպես այդպիսին, ընդհանրապես գոյություն չունի:[18] Դա ոչ ավելին է, քան իրավաբանական անհեթեթություն: Իրավունքը, ըստ նրա, օրենքով պաշտպանված շահերի համակարգ է և օրենսդիրը մարդկանց առանձին խմբերի շահերը իրավական պաշտպանություն է տալիս, հնարավորություն տալով դրանց հանդես գալ որպես մեկ միասնություն, սակայն դրանով չի ստեղծում իրավունքի նոր սուբյեկտ:

Այսպիսով, Ռ.Յհերինգը իրավաբանական անձի պատրանքի տեսությունը զուգակցում է նրա (իրավաբանական անձի) թիկունքում կանգնած իրական մարդկանց խմբային շահերի հետ: Նախահեղափոխական շրջանի ռուս իրավաբանական գրականությունում այդ տեսության կողմնակիցներ էին Յու.Ս.Գամբարովը և Ն.Մ.Կորկունովը:[19]

«Պատրանքի տեսությունը» նշանակալի ազդեցություն ունեցավ պոզիտիվ օրենսդրության զարգացման վրա: Պատահական չէ, որ Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքում և Իտալիայի քաղաքացիական օրենսգրքում «իրավաբանական անձ» տերմինը օգտագործվում է միայն առանձին բաժինների վերնագրերում, առանց դրա բովանդակության պարզաբանմանը, իսկ 1804թ. Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքում (մինչև 1978 թվականը) տվյալ հասկացությունն ընդհանրապես բացակայում է:[20] Լատինաամերիկյան

---

[18] Տես, Jhering R. Geist des römischen Rechts, Bs. III, Leipzig, 1888.

[19] Տես, Гамбаров Ю.С. Курс гражданского права. Т. 1, Общая часть. СПб., 1911, с. 450-452; Коркунов Н.М. Лекции по общей теории права. СПб., 1914, с. 148.

[20] Մանրամասն տես, Л.Жюлио-Морандьер. Гражданское право Франции. М., 1958. т. 1.

մի շարք երկրների քաղաքացիական օրենսդրությունում իրավաբանական անձը ուղղակիորեն որակվում է որպես պատրանքային կազմավորումներ (օրինակ, Չիլիի քաղաքացիական օրենսգրքի 545 հոդվ. և Էկվադորի քաղաքացիական օրենսգրքի 583 հոդվածը).[21]

Տարբեր իրավաբանական անձանց ձևավորման և զարգացման գործընթացին զուգահեռ, պատրանքային տեսությանը ի հակակշիռ, երևան եկան տեսություններ, հայեցակարգեր, որտեղ հիմնավորվում էին իրավաբանական անձի, որպես իրավունքի իրական սուբյեկտի, որպես «հոգևոր իրողություն» կամ «մարդկային միություն»՝ սեփական կամքով, որը բնավ էլ նրա առանձին ֆիզիկական անձանց կամքերի մեխանիկական ամբողջություն չէ:[22] Գիերկեն մշակեց «օրգանական տեսությունը», ըստ որի իրավաբանական անձը հատուկ «մարմնական-հոգևոր օրգանիզմ» («միության անձ») է: Ընդգծվում էր, որ այդպիսի հասարակական օրգանիզմների գոյությունը, որպես իրավաբանական անձինք, ենթադրում է դրանց ճանաչումը պոզիտիվ իրավունքի կողմից, սակայն ոչ երբեք «արհեստական» կազմավորումներ:[23] Նախահեղափոխական ռուս իրավագիտությունում իրավաբանական անձանց իրողությունը ընդունում էին Ի.Տ.Տարասովը, Ն.Լ.Դյուվերնուան և Ի.Ա.Պոկրովսկին:[24]

Այս տեսությունը արժեքավորվում է նրանով, որ հնարավորություն է տալիս ընդունելու իրավաբանական անձանց սեփական կամքի և շահերի առկայությունը և դրանով հանդերձ նրա հատկանիշը՝ որպես քաղաքացիական

---

[21] Տես, Гражданское право. Учебник. Том 1, 2-е издание. Отв. ред. проф. Е.А.Суханов. М., Издательство "БЕК", 1998, с. 174.

[22] Տես, Гражданское право. Учебник. Том 1, 2-е издание, переработанное и дополненное. Отв. ред. проф. Е.А.Суханов. М., 1998, с. 174-175.

[23] Իրավաբանական անձանց «պատրանքային» և «իրական» տեսությունների մասին մանրամասն տես նաև՝ Хвостов В.М. Система римского права. Учебник (по изданию 1907-1908 гг.). М., 1996, с. 118-121; Братусь С.Н. Субъекты гражданского права. с.164-179; Венедиктов А.В. Государственная социалистическая собственность. М. - Л., 1948, с. 675-681.

[24] Տես, Тарасов И.Т. Учение об акционерных компаниях (по изданию 1878 г.). М., "Статут", 2000, с. 140-141; Дювернуа И.Л. Лекции по русскому гражданскому праву. Т. 1. Вып. 2, СПб., 1898, с. 262-272; Покровский И.А. Основные проблемы гражданского права. ПГ. 1917, с. 139.

շրջանառության ինքնուրույն սուբյեկտ, չնայած իրավաբանական անձանց հավասարեցումը ֆիզիկական անձանց, նույնպես գտնում էին արհեստական:

Իրավաբանական անձի էության մասին 20-րդ դարի արտասահմանյան գիտնականների հետազոտություններն, ըստ էության, դուրս չեն եկել վերոնշված ավանդական տեսությունների սահմաններից, սակայն խնդրո հիմնահարցի վերաբերյալ պոզիտիվ օրենսդրությունը շատ առաջ է գնացել:[25]

Խորհրդային իրավագիտությունը ամենալուրջ ուշադրություն է դարձրել իրավաբանական անձի տեսության մշակման վրա: Այսպես, 20-րդ դարի 40-50-ական թվականներին երևան եկան մի շարք աշխատություններ, որոնք հիմք դրեցին իրավաբանական անձի արդիական իմաստավորման և հասկացության համար: Այն ժամանակվա խորհրդային գիտնականների ուշադրության կենտրոնում էին գտնվում պետական ձեռնարկությունների, որպես հիմնական իրավաբանական անձանց էության հետազոտությունը: Այստեղ նույնպես երևան եկան մի շարք տեսություններ, որոնք յուրովի էին մեկնաբանում իրավաբանական անձի հատկանիշները: Այստեղ իրավաբանական անձը համարվում էր որպես «սոցիալական իրողություն», այլ ոչ թե պատրանք, որն օժտված լինելով որոշակի գույքով (սակայն պետության սեփականությունից ոչ առանձնացված և ոչ անձնավորված գույքով) ստեղծված էր լուծելու պետության և հասարակության սոցիալ-տնտեսական խնդիրները, որն իրավագիտության մեջ ստացավ «սոցիալական իրողության տեսություն» (հեղինակ՝ Դ.Մ.Գենկին):[26]

Կատարված հետազոտությունների արդյունքում հետագայում երևան եկան նաև հետևյալ հիմնական տեսությունները՝ «կոլեկտիվի տեսություն»,

---

[25] Մանրամասն տես, Гражданское и торговое право капиталистических государств. М., 1993; Кулагин М.И. Государственно-монополистический капитализм и юридическое лицо. М., 1987; Лаптев В.В. Акционерное право. М., 1999, с. 4-13.

[26] Տես, Генкин Д.М. Юридические лица в советском гражданском праве // Проблемы социалистического права. 1939, N 1, с. 91; Гражданское право. Учебник. Том 1, 2-е издание. Отв. ред. проф. Е.А.Суханов. М., 1998. с. 176.

«պետության տեսություն» և «տնօրենի տեսություն»: «Կոլեկտիվի տեսության» հիմնադիրն էր ակադեմիկոս Ա.Վ.Վենեդիկտովը:[27]

Համաձայն այդ տեսության, պետական իրավաբանական անձանց իրավասուբյեկտության կրողները համարվում են ձեռնարկությունների բանվոր-ծառայողների կոլեկտիվը, ինչպես նաև համաժողովրդական կոլեկտիվը՝ կազմավորված սոցիալիստական պետության մեջ: Այս տեսության հետևորդներն էին պրոֆեսորներ՝ Ս.Ն.Բրատուսը, Օ.Ս.Իոֆֆեն և Վ.Պ.Գրիբանովը:[28]

Այսպես կոչված «պետության տեսությունը», որի հիմնադիրն էր Ս.Ի.Ասկնազին,[29] հիմնավորում էր հետևյալ կանխադրույթը՝ յուրաքանչյուր պետական ձեռնարկությանը սատար է կանգնած նրա գույքի իսկական սեփականատերը՝ պետությունը, հետևաբար, իրավաբանական անձը հենց պետությունն է, որը գործում է տնտեսական հարաբերությունների ողջ համակարգի տվյալ հատվածում: Մեր կարծիքով այս տեսությունը ավելի է համապատասխանում այն ժամանակվա իրավաբանական անձի էությանը, քանի որ առանց առանձնացված սեփական գույքի, քաղաքացիական շրջանառությունում խոսել իրական իրավաբանական անձի մասին, ավելորդ է: Եվ իրոք, խորհրդային սոցիալիստական ցանկացած ձեռնարկության գույքի սեփականատերը, ինքը՝ պետությունն էր, որը քողարկված ձևով, որպես իրավաբանական անձ հանդես էր գալիս այս կամ այն ձեռնարկության անվանումով:

---

[27] Տես, Венедиктов А.В. Государственная социалистическая собственность. М.-Л. 1948.

[28] Տես, Братусь С.Н. Юридические лица в советском гражданском праве. М., 1947; Иоффе О.С. Советское гражданское право. М., 1967; Он же: Иоффе О.С. Гражданское право. Избранные труды. М., 2000; Грибанов В.П. Юридические лица. М., 1961; Он же: Осуществление и защита гражданских прав. М., 2000.

[29] Տես, Аскназий С.И. Об основных правовых отношений между государственными социалистическими организациями. Учебные записки Ленинградского юридического института. Вып. IV, Л. 1947.

Հաջորդ հայեցակարգը՝ «տնօրենի տեսությունը» առավել համակողմանի է մշակվել պրոֆեսոր Յու.Կ.Տոլստոյի կողմից:[30] Ըստ այդ տեսության, իրավաբանական անձի կամքը մարմնավորված է նրա ղեկավարի՝ տնօրենի կամքով. հենց վերջինս լիազորված է իրավաբանական անձի անունից հանդես գալ քաղաքացիական շրջանառությունում, հետևաբար նա է համարվում պետական իրավաբանական անձի իրավասուբյեկտության կրողը:

Հետագայում՝ 60-70-ական թվականներին խորհրդային իրավագիտությունում լայն տարածում գտան նաև «սոցիալական կապերի տեսությունը» (հեղինակ՝ Օ.Ա.Կրասավչիկով)[31] և «կազմակերպության տեսությունը» (հեղինակներ՝ Ա.Ա.Պուշկին, Բ.Ի.Պուգինսկի):[32]

Վերոնշված տեսությունների ընդհանրությունը կայանում է հետևյալում՝ պետական իրավաբանական անձի էական հատկանիշը՝ մարդկային գործոնի առկայությունն է (տնօրեն, ղեկավար կամ կոլեկտիվ) և պարտադիր չէր համարվում պետական ունեցվածքից առանձնացված սեփական գույքի անհրաժեշտությունը, իսկ առանց վերջինիս՝ բնականոն քաղաքացիական շրջանառությունն անիմաստ է, քանի որ այն ունի գույքային, ապրանքային բովանդակություն, հետևաբար այդ շրջանառությունում կարող են մասնակցել ինքնուրույն ապրանքատերեր, որոնք ունեն սեփական գույք: [33] Այդ գույքով իրավաբանական անձինք կարող են պատասխանել իրենց վարկատուների (կոնտրագենտների) առջև:

Ազատ շուկայական հարաբերությունների հիման վրա ստեղծված տնտեսությունը ենթադրում է նաև վերահիմաստավորում մի շարք իրավական

---

[30] Տես, Толстой Ю.К. Содержание и гражданско-правовая защита права собственности в СССР. Л., 1955; Он же: К разработке теории юридического лица в современном этапе // проблемы современного гражданского права. Сборник статей. Отв. ред. В.Н.Литовкин, В.А.Рахмилович. М., 2000.

[31] Տես, Красавчиков О.А. Сущность юридического лица // Советское государство и право. 1976. N 1.

[32] Տես, Пушкин А.А. Правовые формы управления промышленностью в СССР. Автореферат докт. дисс. Харьков, 1964; Пугинский Б.И. Гражданско-правовые средства в хозяйственных отношениях. М., 1984.

[33] Տես, Гражданское право. Учебник. 2-е издание, переработанное и дополненное. Отв. ред. проф. Е.А.Суханов, М., 1998. с.169.

կատեգորիաների մասին մեր պատկերացումները, նոր մոտեցումների և հայեցակարգերի մշակում, համաշխարհային փորձի ընդհանրացում: Դա վերաբերում է նաև «իրավաբանական անձ» կատեգորիային, որն ազատ շուկայական տնտեսության քաղաքացիական շրջանառության հիմնական սուբյեկտներից մեկն է:

Արդի քաղաքացիական իրավունքի տեսությունը և պրակտիկան «իրավաբանական անձ են ճանաչում այն կազմակերպություններին, որոնք որպես սեփականություն, լրիվ տնտեսավարման կամ օպերատիվ կառավարման իրավունքով, ունեն առանձնացված գույք, իրենց պարտականություններով պատասխանատու են այդ գույքով, իրենց անունից կարող են ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, հայցվոր և պատասխանող լինել դատարանում, միջնորդ դատարանում»:[34]

Այսօր Հայաստանի Հանրապետությունում գրանցված են շուրջ չորս տասնյակ հազար իրավաբանական անձինք:[35]

Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 5-րդ գլխի (գլուխը նվիրված է իրավաբանական անձանց) դրույթներին համապատասխան՝ իրավաբանական անձանց վերակազմակերպումը, գրանցումը և վերագրանցումը հստակություն կմտցնի հանրապետության իրավաբանական անձանց համակարգում, կնպաստի քաղաքացիական բնականոն շրջանառությանը և կայուն երաշխիքներ կտրամադրի նրանց պարտատերերին, գույքային շրջանառությունից դուրս կմղի ոչ կենսունակ ու ձևական մասնակիցներին:

---

[34] Բարսեղյան Տ.Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս (դասագիրք բուհերի համար), Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2000, էջ 111:

[35] Տես, Վլադիմիր Նազարյան, Իրավաբանական անձինք: Օրենսդրության զարգացմանն աջակցող իրավագիտական կենտրոն, Երևան, 1999, էջ 4: